

Հաստատում եմ՝

ԱՐՏԵՄ ՄԻԿՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ

N 166 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

Տնօրեն՝----- Մ. Պ. Քուշկյան

<----->> 2023թ.

ԱՐՏԵՄ ՄԻԿՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 166 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր

դասարան՝ _____5ե_____

դասղեկ՝ _Լ. Ստեփանյան_____

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը)

5ե դասարանում սովորում է 28 աշակերտ, 14 տղա , 14 աղջիկ: Դասարանում կա 6 գերազանց առաջադիմությամբ սովորող աշակերտ, մյուսները թույլ և միջին կարողություններով օժտված աշակերտներ են, որոնց հետ պետք է շատ աշխատել՝ որոշակի արդյունքի հասնելու համար: Աշակերտները աչքի են ընկնում կարգապահությամբ, հանդուրժող են , տիրում է փոխօգնության և փոխզիջման մթնոլորտ: Աշակերտները աշխույժ են , դաստիարակված, պատրաստ օգնելու մեկմեկու : Այս տարի 5ե դասարան եկան 4 նոր աշակերտներ, որոնց դասընկերներն ընդունեցին ջերմությամբ և սիրով, նրանք դարձան կուլեկտիվի մի մասնիկը:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

- 1.Դասարանական կուլեկտիվի ձևավորում
- 2.Անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող միջավայրի ապահովում
- 3.Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում
- 4.Դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպում
- 5.Աշակերտների, աշակերտների ու մանկավարժների միջև բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորում
- 6.Աշակերտների արժեքային համակարգի, դիրքորոշման ձևավորում

7. Աշակերտների ստեղծագործական, հասարակայնամետ գործունեության կազմակերպում

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱԴԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ կրոնի դերի և կարևորության մասին ազգի և պետականության պահպանման և գոյատևման գործում, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Կատարել այցելություններ պատմական և մշակութային կենտրոններ՝ թատրոններ, թանգարաններ, բնության հուշարձաններ, հատուկ պահպանվող տարածքներ: Կատարել զրույցներ գեղեցիկի ընկալման տարաբնույթ մոտեցումների մասին, կյանքից բերել օրինակներ և աշակերտների մոտ ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Աշակերտների մոտ հայրենասիրություն սերմանելու և ՀՀ արժանի քաղաքացիներ, ազգային ինքնագիտակցություն ունեցող հայ դաստիարակելու համար կազմակերպել քննարկումներ աշակերտների հետ՝ խոսել բանակի դերի ու կարևորության մասին, որը հզոր երկրի գրավականն է: Նշել մի շարք ֆիդայիների անուններ և թվարկել այն բնավորության գծերը, որ տեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը: Աշակերտների մոտ

սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ ֆիդայիների և հայ ազգային հերոսների հանդեպ: Խոսել վերջին 44-օրյա պատերազմի մասին և մեր դպրոցի այն սաների մասին, որոնք իրենց կյանքը չինայեցին հայրենիքի համարն զոհվեցին այդ պատերազմում:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Աշակերտների մոտ Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում: Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց հիգիենային և ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով: Առաջնորդվեն «Առողջ մարմնում առողջ հոգի» կարգախոսով:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մոտ ձևավորել սեր և հարգանք դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Խթանել աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի ձևավորմանը: Կատարել քննարկում «աշխատանքը գեղեցկացնում է մարդուն» թեմայով:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Բնապահպանական դաստիարակությունը թերևս ամենակարևորն է, քանզի բնությանը հասցրած վնասները մարդու կողմից հանգեցրել են էկոլոգիական աղետի և աշակերտների մոտ պետք է ձևավորել բնության բաղադրիչների հանդեպ հոգատար վերաբերմունք: Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը, պետության կողմից հատուկ պահպանվող տարածքներ, գետափ, լճափ և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում, քննարկել դրանց լուծման ուղիները:

4. Դպրոց-ընտանիք կապը

Վերը թվարկվածները անարդյունք կլինեն , եթե ուսուցչի կողքին կանգնած չլինի ծնողը: Հաճախակի ծնողական ժողովները, ամենամսյա հանդիպումները կնպաստեն , որ նրանք էլ մասնակիցը լինեն դպրոցական առօրյային, որն էլ կնպաստի ուսումնական գործընթացի առաջընթացին:
 Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	կատարման ժամկետը	կատարողներ
1 շաբաթ	Աշակերտների հաշվառում, դասագրքերի բաշխում, դասարանի կահավորում	4-8/09	Դասղեկ Աշակերտներ ծնողներ
2 շաբաթ	Ստեղծել դասարանական ակտիվ՝ ավագ, օգնականներ: Կազմել հերթապահության ցուցակ, ընտրել Դասղեկի ժամի օրեր	11-15/09	Դասղեկ Աշակերտներ
3 շաբաթ	Կազմակերպել և անցկացնել 1-ին ծնողական ժողովը: Հետևել աշակերտների հաճախումներին, ուշացումներին	18-22/09	Դասղեկ Աշակերտներ ծնողներ

4 շաբաթ	Աշխատանքների կազմակերպում ծնողական խորհրդի հետ: Աշակերտների միջանձնային հարաբերությունների ուսումնասիրում	25-29/09	Դասղեկ Աշակերտներ Ի ծնողներ
5 շաբաթ	Ուսման առաջադիմության վերահսկում: Դասավանդող ուսուցիչների հետ խորհրդակցություն	2-6/10	Դասղեկ, ուսուցիչներ, աշակերտներ Ի
6 շաբաթ	Ուսումնական կարգապահության վերահսկում (հաճախում, ուշացում, համազգեստ)	9-13/10	Դասղեկ, աշակերտներ Ի
7 շաբաթ	Արտադասարանական միջոցառումների նախապատրաստում. այցելություն որևէ մշակութային վայր. գեղագիտական դաստիարակություն	16-20/10	Դասղեկ, աշակերտներ Ի
8 շաբաթ	Ուսումնական դաստիարակչական աշխատանքների երկամսյակի արդյունքների ամփոփում, քննարկում	30.10-03.11	Դասղեկ, աշակերտներ Ի
9 շաբաթ	Դիտարկել աշակերտների միջանձնային հարաբերությունները, խնդիր լինելու դեպքում պարզել պատճառները	6.11-10.11	Դասղեկ, աշակերտներ Ի
10 շաբաթ	Պարզել աշակերտների նախասիրություններն ու հետաքրքրությունները և ստեղծագործական քննարկում ծավալել դրանց շուրջ:	13.11-17.11	Դասղեկ, աշակերտներ Ի
11 շաբաթ	Ուշադրություն դարձնել	20.11-24.11	Դասղեկ,

	սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը. գրույց-քննարկումներ		աշակերտներ
12 շաբաթ	Աշակերտների դիտարկում նաև այլ դասաժամերին դասալսումների միջոցով	27.11-01.12	Դասղեկ, ուսուցիչներ, աշակերտներ
13 շաբաթ	Սովորողի կարողությունների և հնարավորությունների բացահայտում ուղղորդող հարցերի միջոցով	04.12-08.12	Դասղեկ, աշակերտներ
14 շաբաթ	1-ին կիսամյակի արդյունքների քննարկում	11.12-15.12	Դասղեկ, աշակերտներ
15 շաբաթ	Դասասենյակի ամանորյա ձևավորում	18.12-22.12	Դասղեկ, աշակերտներ, ծնողներ
16 շաբաթ	1-ին կիսամյակի արդյունքների քննարկում, 2-րդ կիսամյակի աշխատանքների պլանավորում	08.01.24-12.01.24	Դասղեկ, աշակերտներ
17 շաբաթ	Անձնական հիգիենան և նրա կարևորությունը կյանքում	15.01-19.01	Դասղեկ, աշակերտներ
18 շաբաթ	Դասարանում ազնիվ և անկեղծ հարաբերությունների ձևավորում, ընկերական միջավայրի հաստատում:	22.01-26.01	Դասղեկ, աշակերտներ
19 շաբաթ	Իմ երկրի պատմության հերոսական էջերը: Աշակերտներին ներկայացնել հայոց բանակի կազմավորումը, նրան մեջ սերմանել հայրենասիրություն:	29.01-02.02	Դասղեկ, աշակերտներ
20 շաբաթ	Ձևավորել հարգանք սեփական	05.02-09.02	Դասղեկ,

	անձի, ինչպես նաև դիմացինի նկատմամբ:		աշակերտներ
21 շաբաթ	Լինենք բարեկիրթ, էթիկայի կանոնների քննարկում	12.02-16.02	Դասղեկ, աշակերտներ
22 շաբաթ	Ինչ են սովորեցնում մեզ Թումանյանի հերոսները: Պահպանել գիրք նվիրելու ավանդույթը:	19.02-23.02	Դասղեկ, աշակերտներ
23 շաբաթ	Կազմակերպել սովորողների ֆիզիկական զարգացման և առողջության պահպանման ակտիվ միջոցառումներ, մրցույթներ	26.02-01.03	Դասղեկ, աշակերտներ, ֆիզկուլտուրայի ուսուցիչ
24 շաբաթ	Նրանց մասին , ովքեր միակն են ու անփոխարինելի. «Մայր իմ անուշ ու անզին»	04.03-08.03	Դասղեկ, աշակերտներ
25 շաբաթ	Քննարկում «Սուտը և նրա հետևանքները»	11.03-15.03	Դասղեկ, աշակերտներ
26 շաբաթ	Առակների իմաստությունը: Սովորողների մոտ սերմանել բարոյական արժեքներ:	18.03-22.03	Դասղեկ, աշակերտներ
27 շաբաթ	Ազգային տոներ և ավանդույթներ: Մայիսի 1-ի խորհուրդը	01.04-05.04	Դասղեկ, աշակերտներ
28 շաբաթ	Տոների նշանակությունը և կարևորությունը, քննարկում:	08.04-12.04	Դասղեկ, աշակերտներ
29 շաբաթ	Զրույցներ «Իմ երազանքի թևով»	15.04-19.04	Դասղեկ, աշակերտներ
30 շաբաթ	Զմոռանանք անցյալը, ապրենք ներկայով: Սովորողներին համառոտ ներկայացնել 1915թ	22.04-26.04	Դասղեկ, աշակերտներ

**ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ,
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ**

համար	նախասիրական- առարկայական խմբակ	գեղարվեստական -երաժշտական խմբակներ	մարզական խմբակներ	այլ խմբակներ
1				
2			ֆուտբոլ	
3				
4		Ժողովրդ. պար		
5				
6			ֆուտբոլ	
7				
8				
9				
10			ֆուտբոլ	
11	մաթեմատիկա			
12			ֆուտբոլ	
13		պար		
14				
15				
16				
17				
18			ֆուտբոլ	
19				
20				
21		կիթառ		
22		դաշնամուր, սոլֆեջո		
23	անգլերեն			
24				
25		պար		
26				
27				
28	անգլերեն	պար		
29				
30				
31				
32				

33				
34				
35				

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ

անցկացման օրը	դասղեկի անցկացրած միջոցառման(դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	ծանոթություն
07.09	Զրույց նվիրված գիտելիքի օրվան	
14.09	Ո՞վ եմ ես, ի՞նչ եմ ուզում դառնալ	
21.09	Զրույց «Անկախության տոն» կամ Հայաստանի 3-րդ Հանրապետությունը 32 տարեկան է	
28.09	Խոնարհման դասեր նվիրված նվիրված 44-օրյա պատերազմին	
05.10	Ուսուցչի դերը մեր կյանքում կամ շնորհավոր տոնը սիրելի ուսուցիչ	
12.10	Զրույց ՀԻԳԻԵՆԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՔԱՐ թեմայով	
19.10	Գրքերի աշխարհում	
02.11	Զրույց՝ ԿՈՊՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿԱՆ ԹՈՒԼՈՒԹՅՈՒՆ Է թեմայով	
09.11	Մեդիագրագիտության շաբաթ Հայաստանում	
16.11	Զրույց ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԳԱՆՔԻ ԼԵԶՈՒՆ Է թեմայով	
23.11	Զրույց ԲԱՎԱԿԱՆ ՉԷ ՎՆԱՍ ՉՏԱԼԸ, ՊԵՏՔ Է ՕԳՆԵԼ թեմայով	
30.11	Զրույց՝ ԿԱՐՈՂԱՑԻՐ ԸՆԿԵՐ ԼԻՆԵԼ, ԸՆԿԵՐ ԿԳՏՆԵՍ թեմայով	
07.12	Ինչպես պաշտպանվել բնական աղետներից	
14.12	Պատիվ ունեմ լինելու Ա. Միկոյանի հետնորդը	

21.12	1-ին ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ	
	2-րդ կիսամյակ	
11.01.24թ	2-րդ կիսամյակի աշխատանքների պլանավորում	
18.01	Զրույց ԱՇԽԱՐՀԸ ՉԻ ՎԵՐՋԱՆՈՒՄ ՄԵՐ ՏԱՆ ՇԵՄԻՆ թեմայով	
25.01	Հայրենիքի պաշտպանները երեկ, այսօր և վաղը	
01.02	Զրույց ՄԵՆՔ ԿԱԶՄՎԱԾ ԵՆՔ ՄԵՐ ԿԱՐԴԱՑԱԾ ԳՐՔԵՐԻՑ թեմայով	
08.02	Առողջ ապրելակերպի սկզբունքները	
15.02	Զրույց` ԼԻՆԵԼ ՄԵԾ, ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԼԻՆԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ թեմայով	
22.02	Զրույց ԺԼԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՂԵՑԻԿ Է ՄԻԱՅՆ ԺԱՄԱՆԱԿԸ ԾԱԽՍԵԼՈՒ ՄԵԶ թեմայով	
29.02	Զրույց ԱԶԳԻ ԱՊԱԳԱՆ ՄԵՐ ՁԵՌՔԵՐՈՒՄ Է թեմայով	
07.03	Զրույց ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ՓՈԽԵԼ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԸ թեմայով	
14.03	Զրույց ԹՈՂ ԼԵԶՈՒՆ ԵՐԲԵՔ ԱՌԱՋ ՉԸՆԿՆԻ ՄՏՔԻՑ թեմայով	
21.03	Բարեկիրթ վարվեցողության կանոնները	
28.03	Կոնֆլիկտները և դրանց հաղթահարման ուղիները	
04.04	Զրույց ԵՍ ՉԵՄ ԿԻՍՈՒՄ ՔՈ ԿԱՐԾԻՔԸ, ԲԱՅՑ ԵՍ ՀԱՐԳՈՒՄ ԵՄ ԱՅՆ թեմայով	
11.04	Զրույց ԻՄ ԵՐԱԶԱՆՔԻ ԹԼԵՐՈՎ թեմայով	
18.04	Զրույց ՀԵՏՆԻՐ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻԴ, ԴՐԱՆՔ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՆ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Թեմայով	
25.04	Արդյոք լավ գիտեմ իմ իրավունքներն ու պարտականությունները	
02.05	Զրույց ՄԵՐ ԱՐԱՐՔՆԵՐԸ ՀԵՏՆՈՒՄ ԵՆ ՄԵԶ Թեմայով	
09.05	ՈՒԺԻ , փառքի և անմահության մասին	
16.05	Զրույց ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ թեմայով	
23.05	2-րդ կիսամյակի արդյունքների ամփոփում	

**ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԺՎԱՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՎՈՂ, ՍՈՑԻԱԼԱՊԵՍ
ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ**

անցկացրած աշխատանքների ժամկետները	աշակերտների ազգանուն, անուն	դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	կատարված դաստիարակչական աշխատանքների արդյունքները	լրացուցիչ տեղեկություններ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ

դասալսման օրը	Առարկան և դասավանդող ուսուցիչը	դասի թեման	դասալսման նպատակը

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

անցկացման օրը	քննարկվող հարցեր	ժողովի համառոտ բովանդակությունը	ծանոթություն
06.09.23թ	1. Հանրակրթական պետական նոր չափորոշի ներկայացում 2.2023-2024 ուստարվա աշխատանքային պլանի քննարկում 3.Ծնողական խորհրդի կազմի և նախագահի	1.Դպրոցի տնօրեն Տիկին Քուշկյանը ներկայացրեց Հանրակրթական պետական նոր չափորոշիչը 2. Դասդեկ Լ. Ստեփանյանը ներկայացրեց 2023-2024 ուստարվա աշխատանքային պլանը 3. Ծնողները ընտրեցին ծնողական խորհրդի	

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ

Ծնողկոմիտեի կազմը

Նախագահ՝

Սաթենիկ Էտիբարյան

անդամներ՝

Պետրոսյան Քրիստինե

անդամներ՝

Թոսունյան Թագուհի

անդամներ՝

Նազարյան Նարինե

անդամներ՝

Դավթյան Անի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ

անցկացման օրը	քննարկվող հարցեր	ծնողկոմիտեի նիստի համառոտ բովանդակությունը	ծանոթություն
01.09.23թ	1. Դասարանի մաքրում, կահավորում 2. Դասագրքերի վարձավճարի հավաքում 3. Էքսկուրսիաների կազմակերպում	Կատարվեց աշխատանքի բաժանում ծնողխորհրդի անդամների միջև	

ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՒՍՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ
(ուստարվա ընթացքում կատարած աշխատանքների համառոտ ամփոփում և
վերլուծություն)
